

# ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ս. ՅԱՐՄԱՐԵԱՆ

## Թաւրիզի հայերի մի քանի հասարական հիմնարկութիւն- ների մասին

Պարսկաստանում բնակեող հայերին կարելի է երկու խմբի բաժա-  
նել. մէկ, որոնք սկսած մեր պարսկական ժամանակներից բնակեում են  
Հալաստանի Պարսկահայք կոչւած մասում, որ է Պարսկաստանի արեւմտեան  
մասը, աչինքն՝ Խոլում, Սալմաստում, Ուրմիում, Թաւրիզում, Ղարաղա-  
ղում և մի քանի քաղաքներում. իսկ միւսը, դասնօթերորդ դարում  
Շահ-Աբասի օրով գաղթածները, որոնք բնակեում են Թէհէրանում, Սպա-  
հանում և ուրիշ տեղերում: Արդարեւս կենտրոնը, ինչպէս առհասա-  
րակ, նոյնպէս և հայերի համար Թաւրիզն է:

Թաւրիզում բնակեող հայերը կենտրոնացած են աչք քաղաքի երկու  
թաղերում—Բերդաթաղում (Ղալա) և Լիլաւալում (Լէլլիապատ):

Առհասարակ Պարսկաստանի, մասնաւոր թաւրիզի հայերի կեանքը  
մի շար հետաքրքրական երեւոյթ է: Գրանք իրանցով փառաւոր ապացոյց են  
հայերի կենսունակութեան, քաղաքակրթութեան ընդունակ լինելուն:  
Սոցա կեանքը լաւ ապացոյց է, թէ ինչպէս կարող է մի հալ հասարա-  
կութիւն շառաւղաղմել, ամենալաւ ձգտումներ արդարապէս և խոշոր  
քաղքերով դիմել դէպի հանրօգուտ գաղափարների իրագործումը, հրք նա  
ազար է նսխապէս ծրարուած դանազան արգելքներից, որոնք մեռցնում են  
նրանում ամեն տեսակ լաւ ձգտում: Եւ աչք էլ Պարսկաստանում, ուր  
կեանքը աչքեան տխուր հանդամանքներով է շրջապարւած: Սոցա կեան-  
քին մի քիչ մօտ ծանօթացողին ապշեցնում է աչք հասարակական հիմ-  
նարկութիւնները և զանազան ընկերութիւնները, որոնք գոյութիւն ու-  
նին սրանց մէջ: Թաւրիզում ներկայումս կան՝ երկու եկեղեցի, երկու  
երկսեռ դպրոց, երկու բնակարան, երկու կանանց բարեգործական ըն-  
կերութիւն իրենց արհեստանոցներով և մանկապարտէզներով, մի լսարա-  
նական ընկերութիւն, մի խնայողական ընկերութիւն, երկու հասարակա-  
կան գրադարան-ընթերցարան և երկու ուրիշ ընկերութիւն: Սոքա բոլորն  
էլ մեծ կամ փոքր լազոգութեամբ գործում են: Այս անգամ ես ուղղում

եւ այս նամակովս ծանօթացնել «Մուրճ»-ի ընթերցողներին սրանցից իւրաքանչիւրի գործունէութեան հետ:

Բայց առաջիմ հրաւիրում եմ ընթերցողի ուշադրութիւնը թաւրիղեցող մի քանի առանձնապարկութիւնների վրայ:

Ասեցի, որ Թաւրիզում հաւերը բնակուած են երկու թաղում Ղալալում և Լիլաւում: Ենթոյն Պարսկաստանում լաճախակի տեղի ունեցող լարձակումներն և հալածանքներն, հաւերը ապրում են խիտ կուտակած և հալածանքներից ազատ պահելու շարժարտութիւն ունեցող բնակարաններում: Ոչ մի լուսամուտ փողոցի վրայ, փողոցները խիտ նեղ, տները բակերի խորքում, բակերի ծանր դռները միշտ փակ: Բնակարանները զարմանալի միակերպութիւն ունին—բակից մտնում է ընդհանուր նախասենեակ, որի զանազան կողմերում միմեանց հետ հաղորդակցութիւն չունեցող սենեակներ: Սենեակները փռած պարսկական լաւ գորգերով, նոյնիսկ աչիպիսիները, որոնք եւրոպական կահկարասիքով են զարդարւած—այս էլ լառաջանում է Թաւրիզում տախտակացու փայտի թանգութիւնից: Թէև երկու թաղերը միմեանց կից են և մինի կենտրոնից մինչև միւսի կենտրոնը քսան բոպէի որովճանապարհ է, այնուամենայնիւ սրանք խիտ բաժանւած են միմեանցից: Երկու թաղերը շար սիրում են միմեանցից անկախ գործել, միայն անկախ գործած լինելու համար, բայց ոչ թէ մի առանձնապարկութիւն կամ ինքնուրոյնութիւն պահպանած լինելու համար. մի թաղը անպարճառ ունի աչն, ինչ որ միւսը, մինի արածը միւսը անպարճառ կը ցանկաչ կրկնել, մինը միւսի արձագանքը կը հանդիսանայ, աչպիսով երբեմն էլ մինը միւսին խոչնդոտ դառնալով: Ղալան առհասարակ ունեւորների, աղաների թաղն է, իսկ Լիլաւան չքաւորների: Ետք բաներ Թաւրիզում տրաղիցիալով են տարւում, մի անգամ ընտրած ձեւից զժառութեամբ են գուրս դալիս. իսկ հիմնարկութիւնները երբեմն խիտ կաղում են. սրա պարճառը, ի հարկէ լճացած շրջապատն է և ինտելիգէնտների բացակայութիւնը. սակայն այս մասին չեմ:

Թաւրիզի երկու եկեղեցիներին կից կան երկուսն զպրոցներ. Ղալալում՝ տղայոց—Արամեան 7 տարւաչ կուրսով, օրիորդաց—Հակոբեան, 6 տարւաչ կուրսով, իսկ Լիլաւում՝ տղայոց—Հակոբեան, 6 տարւաչ կուրսով, օրիորդաց—Թամարեան, 5 տարւաչ կուրսով: Գպրոցների տնտեսական մասը կառավարւում է ժողովրդից ընտրւած հոգաբարձուների ձեռքով: Հոգաբարձուները Թաւրիզում աչն չեն, ինչպէս Աովկասում. աչտեղ նրանց իրաւունքներն աւելի ընդարձակ են: Նրանք համարէ աւանդուած համարւում են ժողովրդի ներկայացուցիչները: Բացի գպրոցից նրանց իրաւունքը տարածւում է և եկեղեցու գործերի վրայ: Նրանք են լինում առաջնորդի պաշտօնական խորհրդակիցները կարիքի դէպքում, գլխաւորաբար թաղերին վերաբերեալ գործերում: Որովհետև հոգաբարձու ընտր-

ուժ են հասարակութեան մէջ «պարուար» մարդիկ, աչիւնքն՝ հարուար, կշիռ ունեցող, ուտրի երբ հարկաւոր է լինում կառավարութեանը զանազան դիմումներ անել հասարակութեան կողմից հողաբարձուներն են լինում հասարակութեան ներկայացուցիչները: Եղել է ժամանակ, երբ հողաբարձուները մինչև անգամ մանր վէճեր և դատեր էլ են քննելու եղել: Սակայն այս իրաւունքները հիմա համարեա թէ հաւասարել են զէրօի պիժմ հողաբարձուները վարում են զպրոցների տնտեսական գործերը և երբեմն ներկայացուցիչ են լինում կառավարութեան առաջ ժողովուրդի կողմից:

Թաւրիզի տղաւոց զպրոցները աւելի ընդարձակ կուրս ունին քան օրիորդացը. զպրոցների կուրսը ընդհանրապէս նոյնն է ինչ որ Առվկասի ծխական զպրոցներինը առաջ, երբ ունէին աշխարհադուլթիւն և պատմութիւն, իսկ տղաւոց զպրոցներում անցնում են նաև լեզուներ՝ պարսկերէն, ֆրանսերէն և ռուսերէն, որից զուրկ են օրիորդները: Ղալալի զպրոցներն աւելի ապահով են քան Ալաւալիները: Ղալոցների արդիւնքներն են բացի դրամադուլթներից սորացած տոկոսը նաև պատահական բաներ. ներկայացում, վիճակախաղ, նւէր և ալն: Ղալոցներից իւրաքանչիւրը ունի իւր թատերասրահը հաստատուն բեմով, ուր տարին մի քանի ներկայացումներ են լինում համարեա բացառապէս բարեգործական նպատակով. այս է պատճառը, որ այստեղի ժողովուրդը զվարութեամբ է կարողանում հասկանալ թէ հնարաւոր է թատրոն զնալ նաև տոմսակ դնելու ցանկութիւն արտաշարելով և ոչ թէ խնդիրքով առաջարկած տոմսակը գնելուց լեփուց: Նոյն իսկ լինում են մարդիկ, որոնք վիրաւորւում են, եթէ իրենց զանազան պատճառներով տոմսակ չէ առաջարկւած, կամ աւելի ուշ է առաջարկւած, քան մի ուրիշին, որը իրենից մի աստիճան ցած է: Որպէս զի մի դաղափար տւած լինինք, թէ Թաւրիզում ինչ արդիւնքներ են վերցնում ներկայացումներից, ասենք, որ լինում են ներկայացումներ, որոնց առաջին կարգը նշանակւած է լինում 25 զուան, (5 ուրբի) և ամենից շար մուշտարի առաջին կարգին է լինում, որովհետև ունեւոր և քիչ թէ շար դիրքով մարդը իրեն համար սխտաւբեր չի համարում երկրորդ կարգում նստելը: Եւ ալսպիտով արդիւնք ստացւում է 200—300 թիւման (400—600 ուրբի): (Միանգամ ընդ միշտ ասեմ, որ թիւմանը հաւասար է երկու ուրբու, իսկ զուանը 20 կոպէկի. թէև ներկայումս ուստական թղթադրամ ուրբին աչտեղ արժէ 5 զրան 11 շալի, աչիւնքն 1 ուրբի 11 կոպէկ), իսկ Արամեան զպրոցը սովորաբար տարին մի ներկայացում է տալիս թուրքերէն լեզուով, տոմսակները դրոււմ են թագաժառանգի հովանաւորութեան տակ, թատրոն են զալիս հարուար թուրքեր, հասցիլ լինում է 1000—2000 թիւման: Ներկայացումներ տըրւում են զպրոցների, բարեգործական ընկերութիւնների և ալ հիմնարկութիւնների համար:

Թաւրիզում ներկայումս գոյութիւն ունեցող ընկերութիւններէն աչքի են ընկնում կանանց երկու բարեգործական ընկերութիւնները: Զարմանալի է, չէ՞, Պարսկաստանում, բարեգործական ընկերութիւն այն էլ կանանց.— բայց կան և ունին բաւական ընդարձակ գործունէութիւն: Նախորդ նամակումս գրել էի, որ Պարսկաստանի հազ կանաչք շարքաներում բարձր են տղամարդկանցից և այդ շարքաներում երեւում է, Նախ այս բարեգործական ընկերութիւնները.— մինչդեռ տղամարդկանց հիմնած ընկերութիւնները մեռնում են, կամ երբեմն մահամերձ վիճակի մէջ են, կանանց բարեգործական ընկերութիւնները աւելի գորանում և ընդարձակում են իրենց գործունէութիւնը: Եւ որ զարմանալին է՝ կանանց բարեգործական ընկերութիւն կալ նաև Սալմաստում, Բաֆֆու ծննդավայրում, որը և նրա անուշով կոչւում է «Բաֆֆի» ընկերութիւն: Այս ընկերութիւնը այնքան էլ մեծ գործունէութիւն չունի և այս պատճառով ցանկութիւն է չալոյնել միանալ Թաւրիզի բարեգործական ընկերութեան հետ, որով չոյս ունի աւելի օգտակար լինել: Թէ ինչ դեր են խաղացել Սալմաստում կանաչք «գաղթականների» վերաբերմամբ, դա շարերին չալոյնի է: Նախորդ նամակումս գրել էի, որ Սալմաստում սպանուած 9 գաղթականների թաղման ժամանակ միայն մի քանի կանաչք են ներկալ եղել: Բանից դուրս է գալիս, որ հէնց այդ կանաչք են շարունակ նրանց պահպանողները: Ի դէպ, Մահլամ գիւղում, ուր տեղի էր ունեցել 9 գաղթականների սպանութիւնը, սպանւեցին գիւղի ականաւոր մարդկանցից երկու հոգի. ենթադրում են, որ «գաղթականների» ընկերները արած կը լինին վրէժ լուծելու համար: Եւ այս երկու սպանութիւնից վերջ կառավարութիւնը պահանջում է, որ գիւղից դուրս անւին երեք կին, որոնք իբր պահել են սպանողներին, և գիւղացիները տրամադիր են եղել այդ անելու, բայց ոմանց սպանալիքներից վերջ չեն համարձակում գուրս անել նրանց, մանաւանդ որ այդ կանաչք, գիւղում կալուածներ ունենալով, վերջնականապէս կը քալքալէին տնտեսապէս:

Բայց անցնենք կանանց բարեգ. ընկերութիւնների գործունէութեան: Սոցանից մինը կոչւում է «Հայունհաց բարեգ. ընկ. Գաւրիթում»: Սա գոյութիւն ունի 1891 թւից սկսած, կինորոնը Լիլաւայում է և ըստ իւր կանոնադրութեան § 38-ի «... իւր գործունէութիւնը սկսում է Լիլաւա թաղի օրիորդաց դպրոցին բաղմակողմանի խնամք տանելով, քանի որ նորա երևան դալու պատճառը եղել է Լիլաւա թաղի օրիորդաց դպրոցը. ժամանակի ընթացքում համեմատ իւր նիւթական միջոցների նա տարածում է իւր գործունէութիւնը և Լիլաւա թաղից դուրս» (Կանոնադրութիւն Հ. Բ. Ընկ. Գաւրիթում. Գաւրէթ 1895), Այս ընկերութեան նպատակն է, ըստ նոյն կանոնադրութեան, «... նպատակ իգական սեռի լուսաւորութեան, օգնել չքաւոր ընտանիքներին, նպաստել Պարսկաստանի համար վարժու-

հուլիսի 1-ին պատրաստողներին, օգնել չքաւոր աշակերտութիւններին, աղէտներին ժամանակ ժողովրդին, իւր հաշուով Պարսկաստանում պահել կլինի թշուառները և պիտի ասել, որ կանանց աչա ընկերութիւնը շնորհիւ իւր նիւթական բարձր վիճակի բաւական գործ է կատարել: Իւր գլխաւոր նպատակն է օգնել լուսաւորութեան տարածման, որը սակայն այժմ չի կարողանում ցանկալի չափով անել շնորհիւ Տաճկաստանից գաղթած հայերի, որոնց պահպանութեան համար անազին գումարներ է գործադրում: Բալցաւելի լաւ է թեւորով ծանօթանանք նրա գործունէութեան հետ, որով պարզ կը տեսնենք նրա գործունէութեան ընդարձակելու խոշոր քաղերը: Ընկերութիւնը հաշուում է ուսումնական տարիներով: Ընկերութեան հասույթները և դրամագումարը միասին եղել են ուսումնական տարիներում՝

Ուսումն, տարի	Ղուան
1891—92 . . . . .	2011
1892—93 . . . . .	3943
1893—94 . . . . .	8758
1894—95 . . . . .	11557
1895—96 . . . . .	23262
1896—97 . . . . .	56955
1897—98 . . . . .	67621

Վերջին տարւոյ գումարը, եթէ ուսական ուրբիներով հաշուելու լինինք, անում է մօտաւորապէս 13,524 ուրբի 20 կոպ:

Սկզբնական տարիներում, մինչև 94 թիւը ընկերութիւնը իւր հասույթները ամբողջովին գործադրել է լուսաւորութեան վրայ, իսկ 94 թիւից սկսած նրա հասույթների բաւականին մասը գործադրել է գաղթականների վրայ: Գաղթականների համար ընկերութիւնը թէ իւր միջոցներից և թէ իւր ձեռքով հանգանակած գումարից ծախսել է.

Տարի	Ղուան
1893—94 . . . . .	4397
1894—95 . . . . .	4767
1896—97 . . . . .	4825
1897—98 . . . . .	9742
	<u>23731</u>

Ուրեմն ընդամենը ծախսել է ուսական ուրբիներով 4746 ուրբի 20 կոպէկ: Բացի սրանից ներկաւումս էլ անազին քանակութեամբ գաղթականներ է պահում, որոնց ձրիակերութեան վարժեցնելով մի կողմից, միւս կողմից իւր միջոցները չի կարողանում բաւարար չափով լուսաւորութեան վրայ գործադրել: Ներկաւումս կարծեմ օրական մօտ 30 ուրբի է ծախսում գաղթականների վրայ:

Միւս բարեգործական ընկերութիւնը կոչուում է «Արարպատականի Հայուհեաց բարեգործական ընկերութիւն», հիմնուած է 95 թիւն, կենտրոնացած է Ղալալում: Սրա նպատակն էլ մօտաւորապէս նույնն է. «...օգնել նահանգիս (Արարպ.) մէջ՝ հալ իգական սեռի չքաւոր դասակարգի ազգային կրթութեան դործին և ընդհանրապէս հալ կանանց ու օրիորդների մէջ մի քանի անհրաժեշտ արհեստներ տարածել»: (Կանոնադրութիւն Արարպատականի Հայուհեաց բարեգ. ընկ. Կաւրէժ 1895): Այս ընկերութեան հատուցները և դրամագլուխը միասին եղել են (սա իւր տարին հաշուում է մարտի 1-ից մինչև փետրուարի վերջը:

Տարի	Ղուան
1895—96 . . . . .	12675
1896—97 . . . . .	16298
1897—98 . . . . .	20324

Սա էլ իւր միջոցներից գաղթականների վրայ ծախսել է 2200 ղուան, այսինքն ուսական 440 ուսուցիչ, որով երկու ընկերութիւնները գաղթականների վրայ ծախսած են լինում 5186 ուսուցիչ 20 կողմէլ:

Կանանց բարեգ. ընկերութիւնները ունին մի-մի մանկապարտէզ, իւրաքանչիւրում 30—35 երեխայ, մի-մի կանանց կարուծի արհեստանոց, մի-մի գորգի գործարան, ուր սովորեցնում են գորգագործութիւն: Իրենց հասուցներն են բացի անդամավճարներից և դրամագլխի տոկոսից նաև ներկայացումներից, վիճակախաղերից և զանազան երեկուցիներից գոյացած արգիւնքները.—մինչև անգամ, որ մեր կարծիքով աննրեկել է, դպրոցների երեխաների համար իրենց կազմած թոճածառերից, որտեղ մուտք ունենալու համար աշակերտներից փող է առնւում: Այստեղ էլ ինչպէս առհասարակ Թաւրիզի հիմնարկութիւններում եղած պակասութիւնները առաջ են գալիս ինտէլիգենտ ուժերի բացակայութիւնից: Այնուամենայնիւ, ի նկատի առած Պարսկաստանում կնոջ սորկական վիճակը, այս բոլորը ի հարկէ շատ մեծ գործեր են, որ անում են ալտոնդի կանաչք: Թաւրիզում կանաչք և երկտասարդ աղջիկները շրջում են կապուտ չարսաւներով, դուրս չեն գալիս տղամարդ-հիւրի առաջ, միշտ համարեա փակ կեանք են վարում: Շատ կանաչք կան, որ Թաւրիզի բազարը չեն տեսել: Նոր-նոր, շնորհիւ վերջին մի քանի տարիներում Արվկասից եկած վարժուհիների, ալտոնդի կանաչք կամաց-կամաց սկսում են մարդամէջ դուրս գալ, հիւրեր ընդունել և այլն—այն էլ մի քանի ընտանիքներում միայն, բայց չարսաւը չեն թողնում դեռ, երևի դա շատ մեծ քաչ է:

Միւս կարևոր և ներկայումս լաջողութեամբ գործող ընկերութիւնն է «Թաւրիզու Լսարանական ընկերութիւնը», որի նպատակն է «Տառն և հինգ օրը մի անգամ հերթիւ և պարբերաբար թէ Ղալալում և թէ Լիլաւալում դպրոցների սրահում հալ հասարակութեան որպէ՛ս օրի դասախօսու-

թիւններ, դանդաղան հետաքրքիր, շահեկան և օգտակար նիւթերի վրայ, ինչպէս՝ դիրտական, դրական, առողջապահական, պատմական, մանկավարժական և այլն, Նիւթերը զաստօսութիւնից չեղող կ'ենթարկուին հասարական վիճարանութեան»<sup>1)</sup>։ Ամենակարևոր կէտը, ինչպէս տեսնում էք այն է, որ նիւթերը դաստօսութիւնից չեղող ենթարկուում են հրապարակալին վիճարանութեան, որի ընթացքում նիւթը աւելի պարզաբանուում է։ Այս ընկերութիւնը ներկալուում դաստօսութիւններ է դալիս ամեն շաբաթ և սորա քարելաւ ազդեցութիւնը անվիճելի է։ Թէև նիւթերը և նրանց մշակութիւնը ոչ միշտ համապատասխան և հասկանալի են լինում ունկընդիր հասարակութեան համար, շնորհիւ ձեռնհաս ուժերի բացակալութեան, աճուամինալիւ սրանք անշուշտ իրենց ազդեցութիւնը թողում են մարդկանց վրայ։ Ընկերութիւնը հաստատուած է 98 թւի մարտի 1-ին և մինչև հիմա տեւ է 23 դաստօսութիւն, որոնց ցանկը գուցէ ունան համար հետաքրքիր լինի։ Սոքա են—Օղը առողջապահական տեսակէտից, Մանկանց կրթութիւնը, Պարսկահայոց անցեալը, Միսը առողջապահական, գիրական և տնտեսական տեսակէտից, Հրաբուխները, Անձնապանութեան մասին, Աիրք և նրա ազդեցութիւնը, Նանսէնի հիւսիսալին քեռն ճանապարհորդութիւնը, Ալիոհոլակահնութեան մասին, Մնունդ, Լեզուների ծագման մասին, Կնոջ կոչումը, Ընկերական խնդիրներ, Ատրպատականի տնտեսական դրութիւնը, Հասարակական վարք ու բարք, Քաղաքական տնտեսութիւն, Հազոց հին դրականութիւնը, Քաղաքական տնտեսութիւն (չարունակութիւն), Անհատին պարտականութիւնները հանրալին գործերում, Հագուստները պարմական և առողջապահական տեսակէտից, Ընտանիքը պարմական տեսակէտից, Կովկասի հալոց նորագոյն գրականութիւնը, Տիեզերքի մասին։

Նրդու ընկերութիւն թարիլում ընդհանուր են երկու թաղի համար ևս—մինը լսարանականը, միւսը «Խնայողական ընկերութիւն հալոց Գաւրիժում»։ Թաւրիլեցիք միալն ժամանակաւոր բարեգործութեան կամ օգնութեան համար չեն մտածել, մտածել են նաև չքաւոր մարդկանց միջոց տալ մի գումար խնայելու։ Այս ընկերութեան կանոնադրութիւնը փալլում է հետեւեալ վերտառութեամբ. նշանաբան—խնայողութիւն, հաւատարմութիւն աշխատութիւն։ Նպատակը արդէն վիշեցի, նաև ալն—«...ևս և իրճի մտք ամեն ջանքով ու հաւատարմութեամբ խորհել, աշխատել ու գործել ի շահս և ի լաւաշաղիմութիւն ընկերութեան»։ Խնայէս տեսնում էք փքուն խօսքեր։ Ընկերութեան կանոնադրութիւնը իրաւունք է տալիս անդամներին ծախել իրենց բաժնետոմսերը (որոնք արժեն 24 դռան), և անդամներից չափերը օգտելով այլ իրաւունքից և կարիքից զրդած

<sup>1)</sup> Կանոնադրութիւն. Թաւր. լսրան. ընկերութեան. Գաւրէժ 98 թ.

վաճառում են բաժնեդրոմները որով, ինչպէս ասում են, բաժնեդրոմները կենդանացել են մի քանի հարուստների ձեռքը: Ներկայումս ընկերութեան վարչութիւնը փողը շահեցնում է ոչ միայն առուգործի մէջ, այլ որսորդի տալով, Պարոանել է, որ առուգործի մէջ ընկերութիւնը վնասել է: Ընկերութեան հրատարակած «Յայտարարութեան» մէջ, ուր որեւէ էջ որսորդի հաշիւը կարդում ենք:

Խնայողական Ը. Վարչութիւնը պատիւ ունի պատռ ներկայացնել ընկերութեան չարգելի անդամներին նախընթաց չորս տարւան գործողութեանց համառօտ հաշիւն:

1897 թիւ. ապրիլ 1-էն 94, 95, 96 թւականներին. 4045 հար բաժնեդրոմների, արժէք . . . . . 109,933 ղոան 20 կոպ.

1897 չունիս 1-էն ցվերջ դեկտ. 720 բաժնեդրոմներէն դանձւած . . . . . 17,280 » — »

Գումարն է . . . 127,213 ղոան 20 կոպ.

100 հակ նուէէ ղուր շահ . . . 3,203 ղ. 70 կ.)

Տոկոս սրացած, ծախքերն հլ-

լիէ երբը . . . . . 15,125 » 57<sup>1</sup>/<sub>2</sub> կ.) 17,329 — 27<sup>1</sup>/<sub>2</sub> »

(որով թմնը. տարէն շահերէ

143<sup>4</sup>/<sub>8</sub> կոպ.)

1898 թ. ապրիլ 1. գումարն է . . . 144,542 ղոան 47<sup>1</sup>/<sub>2</sub> կ.

Արդ 1898 ապրիլ 1-ն

1894 թւի մէկ բաժնեդրոմ արժէ 35 ղ. 20 կ. 1200 հար 42240 ղ.

1895 » » » » 30 » 80 » 1449 » 44620 » 20 կ.

1896 » » » » 27 » 80 » 1396 » 38808 » 80 »

1897 » » » » 26 » 05 » 720 » 18756 » — »

4765

Գումարն է . . . 144434 » 00 »

Առ ձեռն մանր ծախուց համար . . . . . 108 » 47<sup>1</sup>/<sub>2</sub> »

Գումարն է . . . . . 144542 » 47<sup>1</sup>/<sub>2</sub> »

Ներկայումս ընկերութիւնը ունի 144,542 ղոան, մօր 28,903 ո.:

Թաւրիզեցոց առանձին ուշադրութիւնը գրաւում է լուսաւորութեան խնդիրը, ոչ միայն Թաւրիզում, այլ և գաւառներում. այդ նպատակով կան հիմնւած երկու ընկերութիւններ ես, որոնցից մէնը «Ընթերցասիրաց գրադարանական ընկերութիւն», որի «Նպատակն է Արրպատականի լսողական չբաւոր դասակարգի մէջ տարածել ընթերցասիրութիւն, բաց անելով Թաւրիզում մի ձրի ժողովրդական ընթերցարան», նաև Արրպատականի զանազան տեղերում նոյն բանն անել, կամ գոյութիւն ունեցող ընթեր-

ցարաններին նպատոներ տալ <sup>1)</sup>), Այս ընդարձակ ծրագիրը ընկերութիւնը չի իրագործել, իսկ ինքը ներկայումս մահամարձ գրութեան մէջ է, Սրա գործունէութիւնը աչն է եղել, որ թաւրիզում մի ժամանակ ունեցել է ձրի ընթերցարան, բայց վերջում ինչ-ինչ պարճառնելով լուր ընթերցարանը փոխադրել է Մարաղա, կարծեմ հէնց սրանով էլ սահմանափակել է ճրագործունէութիւնը, իսկ միւսը «Գլորոցական բարեսիրական ընկերութիւն», որի «...նպատակն է օգնել Աորպատականի հալոց դպրոցների մէջ գործած չքաւոր աշակերտաց և աշակերտուհեաց, տալով նոցա ուսումնական ամեն պիտուքներ <sup>2)</sup>»:

Թաւրիզում կան երկու հասարակական գրադարան-ընթերցարաններ, Սոցանից մինը, Լիլաւաչինը, կոչուում է «Աբովեան գրադարան» ի չիւշտրակ անցեալ տարի լրացած Աբովեանի մահւան լիսնամեակի, Լիլաւաչինը աւելի կանոնաւոր է և կարծեմ աւելի հարուստ, Սրանում են կովկասի հալոց բոլոր թերթերը, նաև Ռուսաստանի, Արեմոեան Եւրոպայի և Եգիպտոսի մի քանի հալ թերթեր, Յաճախորդներ շատ քիչ ունին, Մի ալ անգամ մանրամասն կը գրեմ սրանց գործունէութեան մասին:

Սոքա են ներկայումս Թաւրիզում գոյութիւն ունեցող ընկերութիւնները, իսկ մօր անցեալում գոյութիւն է ունեցել «Հալոց կրթական Սէր ընկերութիւն», որի անդամները որոշ «կուսակցութեան» մարդիկ լինելով, ալդ ուղղութեամբ էլ գործել են դպրոցական և առհասարակ կրթական գործի մասին հոգալով: Այս ընկերութեան կանոնադրութիւնը սկսուում է մի ազգու զիմուժով դէպի «չարգելի հալերը», որի մէջ գիւղացու բոլոր թշուաութիւնը տգիտութիւնից չառաջ եկած համարելով, առաջարկում է օգնել իրեն, ալդ պակասը վերացնելու գործում: Բայց այս ընկերութիւնը, ինչպէս ասացի, արդէն մեռած է:

Չը բաւականանալով այս ամենով Թաւրիզի հալերը ալժամ միտածում են շատ աւելի խոշոր բաների մասին.—ամբողջ Աորպատականի համար Թաւրիզում հիմնել մի կենտրոնական ուսումնարան և ունենալ մի օրաթերթ: Երկուսի համար էլ լուրջ արգելքներ չը կան, և շատ հաւանական է, որ մօր ապագայում իրականութիւն ստանան: Գիտար է մի քիչ լրագրի ինչդիրը, որի գոյութիւնը խափանել կարելի է մի քանի թիւմանով: Ինչպէս ասում են, բաւական է մի չարձակում տեղացի որևէ ազդեցիկ մարդի կամ Տաճիկ կառավարութեան դէմ, էլ չասեմ Պարսկաստանի դէմ, և ահա թերթը վրանդւած է: Գէ, ի հարկէ աշխարհում են այս տեսակ պատահարներից ազատ պահել ապագայ թերթի գոյութիւնը:

<sup>1)</sup> Կանոնադրութիւն՝ Ընթ. Գրագ. ընկերութ. Թաւրիզ 1895 թ.

<sup>2)</sup> Կանոնադրութիւն Գրոցական բարեսիրական ընկերութեան Գաւրէժ, 1895 թ.

Մի չափազանց դժվելի և ամեն կողմով օգտակար բան է այն միտքը, որ աշխատում է իրադրոճել ալթմեան առաջնորդ Սահակ Լալիսկոպոս Ալվարտեանը. — առաջնորդարանին կից կազմել մի մարմին, առաջնորդական խորհուրդ, հալարնակ գաւառներից ընտրած ներկայացուցիչներից կազմած, Այս խորհուրդի գերը պիտի լինի մասնակցել Արրպատականի հալարի այն գործերում, որոնք առաջնորդարանի միջոցով են կատարում, Յալարնի է, որ Արրպատականի առաջնորդարանը նաև մի քաղաքական մարմին է ճանաչում թէ Պարսից կառավարութեան և թէ դեսպանների կողմից: Այս պարճառով Սրբազան Ալվարտեանի հրամանով Սալմաստի յաջնորդ Խաչիկ վարդապետը ներկայումս շրջում է գաւառները և ընտրութիւններ է կատարում:

Կենտրոնական ուսումնարան ուղում են բանալ նաև Սալմաստում, գիւղադրոնիսական, որի համար ամեն բան պարբար է, Ռուսաստանում գտնւած Սալմաստեցի վաճառականները խոչոր նւիրադուրթիւններ են արել, մնում է շինութիւնը կառուցանել: